

Նվիրվում է Սոնա Սեֆերյանի հիշատակին



ՄՈՆԱ ՄԱՐԳՍԻ ՄԵՏԵՐՅԱՆ

Թարգմանիչ, շեքսպիրագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ծնվել է Հալեպում (Սիրիա): 1947 թ. ընտանիքը բնակություն է հաստատել Հայաստանում: Ավարտել է Ն.Կրուպուկայայի անվան միջնակարգ դպրոցը, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլիական բաժինը, Լենինգրադի համալսարանի մանկավարժական երկամյա կուրսերը:

1965 թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում՝ նախ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլիական բանասիրության, ապա թարգմանչական բաժնում: Դասավանդել է անգլերեն, թարգմանաբանություն, գրավոր և բանավոր թարգմանություն, Աստվածաշնչի թարգմանությունների պատմություն:

Թարգմանել է անգլո-ամերիկյան հեղինակների գործերը (Լ. Քերոլ, Ռ. Քիփլինգ, Ք. Գրեհեմ, Դ. Ն. Լորենս, Ք.Մենսֆիլդ, Է. Նեմինգուեյ, Ս. Ֆիցջերալդ և այլն): Ունի 40ից ավելի հոդված Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունների վերաբերյալ, մի շարք դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ, որոնցից նշանակալից են «Իմաստախոս Շեքսպիրը» (Շեքսպիրի անգլերեն-հայերեն իմաստախոսությունների բառարան), «Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն բառարանը», «Իմաստախոս ժողովուրդը» (անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն ասացվածքներ), «Դարձվածաբանական բառարանը»:

Զեկուցումներով հանդես է եկել Շեքսպիրագիտական և Բայրոնագիտական գիտաժողովներում:

«Թարգմանչաց արվեստ» (1987 թ.) ամենամյա գիտաժողովների նախաձեռնողն է եղել:

«Աստղիկ» գիրք թարգմանչացի (1988 թ.)՝ առաջին տարեգիրքը հայ իրականության մեջ, «Սահակ Պարթև» հրատարակչության (1990 թ.), Շեքսպիրագիտության (1990 թ.) և Բայրոնագիտության կենտրոնների (2009 թ.) և 70-ականներից Երևանի պետական համալսարանի Թարգմանչաց դպրոցի (որը, 5-րդ դարից սկսած, հայ իրականության մեջ ութերորդն է) հիմնադիրն է:

Ղեկավարել և գրախոսել է դիպլոմային աշխատանքներ, թեզեր, ատենախոսություններ թարգմանության, շեքսպիրագիտության և Բայրոնագիտության բնագավառներից: ՀՀ ԳԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գի-

տական կոչումներ շնորհող խորհրդի անդամ էր: 1988 թ. գրողների միության անդամ է եղել: 2009 թ. Երևանի պետական համալսարանի հիմնադրման առթիվ ստացել է Հայաստանի հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

ՍՈՆԱ ՍԵՖԵՐՅԱՆ՝
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս անուն, ազգանունը և բառակապակցությունը անմնացորդ ՀՈՄԱՆԻՇՆԵՐ են, որ ծնվեցին Ս. Սեֆերյանի հետ՝ կյանքի ու գործունեության ընթացքում համատեղ ընթացան:

Քանի որ իր ողջ կյանքում գեղարվեստական թարգմանությունը մնաց իր կյանքի միակ ու մեն միակ նպատակը:

Թարգմանության արվեստն ամենուր հետևեց նրան և գորացավ-հգորացավ տարիների ընթացքում:

Նա սրտի թելադրանքով միայն ընտրեց ու հավաքեց անգլիացի, ամերիկացի հեղինակներին իր շուրջը ու թարգմանեց համաշխարհային հռչակ վայելող նրանց ստեղծագործությունները, խոսեցրեց հայերեն, գրքերը տարածվեցին հայ ընթերցող լայն հասարակության մեջ, ընդունվեցին մեծագույն սիրով ու մնացին ընդմիջտ պայծառատես ընթերցողների հիշողության մեջ ու սրտում:

Քանզի նրա կատարած բոլոր թարգմանությունները մեծ արվեստով ու նպատակալացությամբ էին կերտված:

Սակայն այսքանով կարո՞ղ էր սահմանափակվել Ս. Սեֆերյան թարգմանչուհին: Իհարկե՝ ոչ: Նա ԵՊՀ-ում հիմնեց թարգմանչաց դպրոց, որը հետագայում աճեց ու վերաճեց սկզբում թարգմանչական բաժնի, այնուհետև՝ թարգմանու-

թյան տեսության և պրակտիկայի ամբիոնի: Նա դասավանդեց լեզու և գեղարվեստական գրականություն, սերունդներ կրթեց ու թարմ գիտելիքներ փոխանցեց, միշտ, մինչև վերջ անմնացորդ կերպով: Նրա կողքին աճեցին սաներ և գեղարվեստական թարգմանության բնագավառում հայտնի անուններ դարձան՝ շարունակելով նրա ուսմունքն ու ավելացնելով իրենց թարգմանություններում կուտակած գիտելիքների վրա նորը: Մպիրալաձև զարգացումով:

Այսքանով սահմանափակվել չէր կարող Ս. Մեֆերյանի պրպտող հոգին:

Նա խորհում էր հիմնել և իրականացրեց նպատակը՝ հրատարակելով մի պարբերական «Աստղիկ» անվանումով, ուր թարգմանության հարցերն ամբողջովին, բոլոր տեսանկյուններից ի տես պետք է դրվեին ապագա սերունդների առաջ, ի հայտ պիտի գային նոր անուններ, որ իրենց առաջին քայլերն էին կատարելու գեղարվեստական թարգմանության բնագավառում՝ արձակի, պոեզիայի, հոդվածների, քննադատությունների թարգմանություններով՝ անվանի և արդեն կայացած թարգմանիչների, հոդվածագրերի, գրաքննադատների կողքին: Պիտի տեսական հարցեր մշակվեին, առանց երկնչելու սկսնակները պետք է հանդես գային փորձառու և սկսնակ քննադատների կողքին՝ ճիշտ ուղու վրա կանգնելու նպատակով: Մասնակիցներն իրար հերթ չտալով, տպագրում էին իրենց հոդվածները տարբեր թեմաների շուրջ, բայց միշտ առաջնային թեման մնալով գեղարվեստական թարգմանության հարցերը: Լույս տեսան

նրա նախաձեռնությամբ, կազմելու և խմբագրելու աշխատանքին համատեղ «Աստղիկի» համարներ, որտեղ նաև հատուկ բաժին հատկացվեց հանդեսում թարգմանության արվեստին նվիրված ասույթներին՝ սկսած անտիկ շրջանի մեծ մտածողներից մինչև մեր օրերը: Տողացի թարգմանություններին, նպատակային առումով, ևս տեղ տրվեցին:

Այսպիսով, հաջողությամբ պսակվեց նրա այս նպատակը ևս և վերջում վստահեց իր նախկին, այժմ անվանի գրքչակիցներին ու համագործակիցներին:

Այնուամենայնիվ, այսքանով սահմանափակվել չէր կարող Սոնա Սեֆերյանի պրպտող միտքը:

Դարձյալ նրա նախաձեռնությամբ հիմք դրվեց Շեքսպիրագիտության կենտրոնին ԵՊՀ-ի կամարների տակ:

Հիշում եմ իմ հարաբերությունները Ս. Սեֆերյանի հետ, որոնք մտերիմ լինելուց առավել գործնական են եղել: Մի քանի անգամ բախտ է վիճակվել միասին հանգստանալ ու աշխատել Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանը: Մեր հանգստյան ժամերը, որքան էլ տարբեր թեմաների շուրջ էին ծավալվում, միևնույն է, վերջում հանգում էին գեղարվեստական թարգմանության նյութին: Մեծ էր մեր ոգևորությունն այդ ժամանակ, ժամերն անցնում էին աննկատ ու մեծ բավականություն պատճառում:

Նույնիսկ երկրային կյանքի վերջին շրջանում, երբ տնից դուրս չէր գալիս՝ ֆիզիկապես ուժահատ լինելու պատճառով, հեռախոսի միջոցով կապ էր հաստատում հարազատ ու անկեղծ բարեկամների, ընկերների հետ: Այցելում էինք

նրան, նստում նրա կողքին, և նա շարունակ ուզում էր խոսել միայն իր նախասիրությունների մասին: Դեռ շատ ծրագրեր ուներ իրականացնելու: Ցանկ էր կազմել, թե ինչ հեղինակների հետ է այնուհետև աշխատելու և ընթերցողի սեղանին ինչ նոր գրքեր է դնելու:

Սակայն դաժան գտնվեց ճակատագիրը: Ս. Սեֆերյանը՝ մեր սիրելի բարեկամն ու արվեստասեր մարդը, չհասցրեց իրականացնել բոլոր ծրագրերը և մեզ թողեց գրական ստեղծագործությունների մի հարուստ շտեմարան, որին շատ երկար ժամանակ կղիմի իր հայ ընթերցողը և մեծ բավականություն կստանա ընթերցումից, կվայելի այն հրաշալի ստեղծագործությունները, որոնք համաշխարհային գրականության մեջ իրենց պատվավոր տեղն ունեն: Դրանց հետ կանմահանա նաև մեր շատ սիրելի Սոնա Սեֆերյանի շնորհակալ աշխատանքը:

Իր նախկին ու նոր սաները չեն մոռանա այն մեծ ներդրումը, որ նրանց աշխատանքային գործունեության առաջընթացի համար բացեց նրանց համար թարգմանական մանրակրկիտ գաղտնի ծալքերը, զարգացրեց նրանց գիտելիքները և շատերին կանգնեցրեց իր կողքին՝ շարունակելու այդ մեծ գործը:

Սոնա Սեֆերյան անուն, ազգանունը ինքնըստինքյան շատ բան է ասում մեզ և հոմանիշ դարձած գեղարվեստական թարգմանություն բառամիավորման հետ, կհարատևի: